

## Աշխատանքային խորհրդակցություն Գառնիի համայնքապետարանում

04.04.2019

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն ապրիլի 3-ին մարզի մի քանի համայնքներ կատարած աշխատանքային այցի շրջանակներում խորհրդակցություն է անցկացրել Գառնիի համայնքապետարանում Ողջաբերդ, Գեղարդ, Գառնի, Գողթ, Գեղադիր և Հացավան համայնքների ղեկավարների մասնակցությամբ:

Քննարկվել են ՏԻՄ օրենքով նախատեսված համայնքի ղեկավարի պարտադիր և կամավոր խնդիրները՝ ընդգծելով հատկապես պարտադիր խնդիրների պատշաճ լուծումը որպես համայնքի ղեկավարի առաջնահերթություն:

Մարզպետը ծանոթացել է 2018 թվականի ընթացքում հաստատված սուբվենցիոն և առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրերով համայնքներում իրականացվող աշխատանքների ընթացքին և անդրադարձել նաև 2019 թվականին կառավարություն ներկայացրած սուբվենցիոն ծրագրային հայտերին:

Մարզի համայնքներն ուշադրության կենտրոնում են: Համայնքների ղեկավարների հետ ունեցած աշխատանքային խորհրդակցության ընթացքում Ռոմանոս Պետրոսյանը ևս մեկ անգամ վերահաստատել է տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցության անհրաժեշտությունը՝ միտված համայնքների զարգացմանն ու կյանքի որակի փոփոխությանը: